



ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԴԱԿԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2017
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Սիրելի համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանն ամփոփում է աշխատանքային տարին արդեն ավանդական դարձած տարեկան հաշվետվությունների թողարկմամբ: Լիաիույս եմ, որ դուք կթերթեք հաշվետվության էջերը և կծանոթանաք անցած տարվա ընթացքում Ձեր վարչական շրջանում կատարված աշխատանքներին: Ուրախությամբ

եմ արձանագրում, որ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, և տարեվերջին կարող ենք վստահ ասել, որ ձեռքբերումների շարքը ոգևորիչ է: Պետք է նշեմ, որ այդ գործում իրենց զգալի լուծման հավասարապես ներդրել են ինչպես մեր բնակիչները, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարները:

Վստահ եմ, որ առկա որակական փոփոխությունները՝ բարեկարգված բակային տարածքները, կառուցված խաղահրապարակները, ավելացած կանաչապատ տարածքները, բարեկարգ ու լուսավոր մայրերն ու փողոցները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու Երևանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի և ընդհանուր քաղաքային միջավայրի դրական փոփոխության տեսանկյունից:

Վստահ եմ նաև, որ այն տեսանելի արդյունքը, որ արձանագրել ենք հարմարավետ քաղաքային միջավայր ստանալու գործում, լինելու է յուրաքանչյուրիս հոգատար վերաբերմունքի ու հոգածության առարկան, ինչն էլ թույլ է տալու իրականացնել նոր ծրագրեր՝ մեր մայրաքաղաքի և նրա վարչական շրջանների զարգացումը դեպի երկարաժամկետ հեռանկար ուղղորդելու նպատակով:

Տարոն Մարգարյան
Երևանի քաղաքապետ



Հարգելի դավթաշենցիներ

Մեր վարչական շրջանի համար 2017 թվականը ևս մեկ արդյունավետ տարի էր, որի ընթացքում շարունակվեցին շրջանի բարեկարգման ու կանաչապատման, ենթակառուցվածքների արդիականացման աշխատանքները, իրականացվեցին զանազան մշակութային ու սպորտային ծրագրեր: Տարեցտարի Դավթաշենը դառնում է ավելի գրավիչ ու ժամանակակից, որտեղ պայմաններ են ստեղծվում հարմարավետ կյանքի, մարզական և մշակութային կենտրոններում հետաքրքիր ու օգտակար ժամանակ անցկացնելու համար:

Մեր բոլոր համատեղ ձեռքբերումների համար իմ անկեղծ շնորհակալությունն եմ հայտնում Ձեզ, սիրելի դավթաշենցիներ: Մեր հաջողությունները և նվաճումները հավասար իրավունքով պատկանում են բոլորիս:

Առաջիկա տարիներին ևս մեր ծրագրերն ու աշխատանքներն ուղղված են լինելու հարազատ վարչական շրջանը զարգացնելուն և լավագույններից մեկը դարձնելուն:

Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար
Ռուսլան Բադրասարյան

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017 թ. Դավթաշեն վարչական շրջանում աշխատանքներ են իրականացվել փողոցների, մայրերի և բակերի ասֆալտապատման և բարեկարգման ուղղություններով:



Փողոցների, մայրերի, բակերի ասֆալտապատում

- ✓ բակային տարածքներ՝ 16175 քմ
- ✓ ճանապարհներ՝ 12500 քմ

Մայրերի, պուրակների սալկապատում

- ✓ Սալկապատվել է 411.5 քմ ընդհանուր մակերեսով տարածք
- ✓ Սալկապատումն իրականացվել է վարչական շրջանի 4 բարեկարգված բակերում
- ✓ Եզրաքարերի տեղադրում՝ 2297 գծմ
- ✓ Բարեկարգված 4 բակերում՝ 2097գծմ
- ✓ Աղաբաբյան փողոցում՝ 200գծմ

Թեքահարթակների կառուցում

- ✓ Կենտրոնական փողոցներում կառուցվել է 10 թեքահարթակ:
- ✓ Բազմաբնակարան շենքերի աստիճանավանդակներին կից և շենքերին հարակից տարածքներում կառուցվել է 30 թեքահարթակ:
- ✓ Կենտրոնական փողոցներում տեղադրվել են նստարաններ և աղբամաններ:



ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

2017 թ. վարչական շրջանում բնակարանային ֆոնդի պահպանման ուղղությամբ կատարվել են ծավալուն աշխատանքներ, վերանորոգվել են շքամուտքեր և տանիքներ, բարեկարգվել են բակային տարածքներ:

✓ **Շքամուտքերի վերանորոգում**
✓ Վերանորոգվել է 31 շենքի 40 մուտք:


✓ **Տանիքների վերանորոգում**
✓ 76 շենքերում հիմնանորոգվել և վերանորոգվել է 10870 քմ ընդհանուր մակերեսով հարթ տանիք:

Համագործակցություն համատիրությունների հետ

- ✓ Մասնակի նորոգում և սպասարկում՝ 170 վերելակ
- ✓ Կոյուղագծերի վերանորոգում՝ 215 գծմ
- ✓ Անձրևատարների փոխարինում՝ 828.4 գծմ
- ✓ Զրագծերի վերանորոգում՝ 57 գծմ
- ✓ Բազմաբնակարան շենքերին կից իրականացվել է կանաչ գոտիների ընդլայնման համար բուսահողի տրամադրում՝ 12 խմ



Վերանորոգված
հարթ տանիքներ



Վերանորոգված
շքամուտքեր



2015

2016

2017



ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

- ✓ 1-ին թաղամաս 16, 17, 18 շենքերի բակ 5600 քմ ընդհանուր մակերեսով կանաչապատում 1135 քմ, մանկական խաղահրապարակի կառուցում
- ✓ 2-րդ թաղամաս 3, 4ա, 4բ շենքերի բակ 3600 քմ ընդհանուր մակերեսով կանաչապատում՝ 800 քմ, մանկական խաղահրապարակի կառուցում
- ✓ 4-րդ թաղամաս 47, 48 շենքերի բակ 6400 քմ ընդհանուր մակերեսով բակային տարածքի կանաչապատում՝ 1500 քմ
- ✓ 4-րդ թաղամաս 49 շենքի բակ 1800 քմ ընդհանուր մակերեսով կանաչապատում 100 քմ, մանկական խաղահրապարակի կառուցում



- ✓ Բակային տարածքներում տեղադրվել է 12 զրուցարան 88 նստարան 37 աղբաման
- ✓ Խաղահրապարակների ստեղծում
Ստեղծվել է 2 խաղահրապարակ Դավթաշեն 2-րդ թաղ. 22 շենքի բակում և Դավթաշեն 3-րդ թաղ. 6/2 շենքի բակում:
- ✓ Տեղադրվել են Մանկական 5 խաղ 35 մարզասարք 4-րդ թաղամաս 20-25 շենքերի բակում տեղադրվել է 1 ֆուտբոլի դաշտ
- ✓ Իրականացվել է բակային նկարազարդում՝ 800 քմ

	Ստեղծված խաղահրապարակների քանակ	Տեղադրված համալիրների, մանկական խաղերի, մարզասարքերի քանակ
2015	6	42
2016	6	40
2017	6	40

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. շարունակվել են իրականացվել սոցիալական ծրագրեր:

Այցելություն զորամասեր

- ✓ Կազմակերպվել է ԼՂՀ և ՀՀ սահմանամերձ շրջաններում ծառայող 114 ծնողի այցելությունը զորամասեր:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԿ-ՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ
Տարաբնույթ սոցիալական ծրագրեր են իրականացվել «Դիակոնիա» ԲՀԿ-ի, «Առաքելություն Հայաստանի» ՀԿ-ի, «Լույսի աստղ» ՀԿ-ի, Դավթաշենի Սրբոց Նահատակաց եկեղեցու, «Միայանակ տարեցների սպասարկում» ՀԿ-ի, «Հայաստանի խուլ-համրերի» միության, «Նյու լայֆ Արմենիա» ԲՀԿ-ի, «Նազըմ» ԲՀԿ-ի և անհատ բարերարների և բարեգործների հետ:



- 1 անօթևան ապահովվել է ժամանակավոր կացարանով,
- 58 շահառու օգտվել է բարեգործական ճաշարանից:

Տրամադրվել են.

- դրամական օգնություն՝ 338 ընտանիք,
- նյութական օգնություն՝ 568 ընտանիք,
- պարենային օգնություն՝ 1631 ընտանիք,
- վառելափայտ՝ 41 ընտանիք,
- ամանորյա մանդի փաթեթներ՝ 1394 ընտանիք
- ամանորյա նվեր-փաթեթներ՝ 1500 երեխա

Աջակցության ծրագրեր են իրականացվել.

- վարչական շրջանում բնակվող սիրիահայ 26 ընտանիքի համար,
- Արցախյան հերոսամարտում զոհվածների, քառօրյա պատերազմի մասնակիցների, անապահով ազատամարտիկների և զոհված զինծառայողների, 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի զինհաշմանդամների 337 ընտանիք-

ների համար,

- միալնակ, անժառանգ, տարեցների համար՝ ապահովելով տնային խնամք,
- ԼՂՀ-ի և ՀՀ մարզերի հետ համագործակցության շրջանակում Դավթաշեն վարչական շրջանի կողմից իրականացվել են մի շարք սոցիալական ծրագրեր,
- Պետական և միջազգային տոներին, հիշատակի օրերին իրականացվել են մի շարք սոցիալական աջակցության ծրագրեր:

Կազմակերպվել է.

- 100 երեխայի հանգիստը «Հասմիկ» ճամբարում,
- «Երևանյան ամառ» եռամսյա մշակութային ծրագրի շրջանակում սոցիալապես անապահով և հաշմանդամ երեխաների մասնակցության ապահովում բակային տարբեր միջոցառումներում,
- Գիտելիքի օրվա կապակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքների 100 երեխայի տրամադրվել են պայուսակներ և գրենական պիտույքներ:



«Էրեբունի-Երևան 2799» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում 213 ընտանիքի տրամադրվել է կենցաղային տեխնիկա:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. կրթական ծրագրերը շարունակել են առաջնահերթ լինել Դավթաշեն վարչական շրջանում:



Նախադպրոցական հաստատությունների վերանորոգում, հիմնանորոգում

- ✓ Համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում «Գլոբալ Կրեդիտ» վարկային կազմակերպության կողմից հ. 60 մանկապարտեզը համալրվել է մարզագույքով, իսկ «Հ. Խաչատրյանի անվան հ. 199 հիմնական դպրոցի» համակարգչային դասարանը՝ երկու նոր համակարգչով: «Նագքում» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ հ. 59 և հ. 62 մանկապարտեզներում իրականացվել է ցանկապատերի ներկման աշխատանքներ: Հ. 58 մանկապարտեզում իրականացվել են մեկ խմբասենյակի և դահլիճի վերանորոգում:
- ✓ Հ. 59 մանկապարտեզում իրականացվել է 4 խմբասենյակի և դահլիճի վերանորոգում:
- ✓ Հ. 60 մանկապարտեզում իրականացվել է 4 խմբասենյակի և 1 խմբասենյակի սանհանգույցի վերանորոգում:
- ✓ Մանկապարտեզները համալրվել են 496 միավոր նոր գույքով:

Վարչական շրջանի 5 մանկապարտեզում ապահովվել է 1569 երեխայի անվճար նախադպրոցական ուսուցումը:

Միջոցառումների կազմակերպում

- ✓ Կրթօջախներում նշվել է ՀՀ Անկախության տոնը, անցկացվել են տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ և բաց դասեր:
- ✓ Մանկապարտեզների ավարտական խմբերի երեխաներին նվիրվել են գրենական պիտույքներով դպրոցական պայուսակներ:
- ✓ Արցախի շրջանների հետ համագործակցության ծրագրի շրջանակում աջակցություն է ցուցաբերվել Ստեփանակերտ և Մարտակերտ քաղաքներին՝ որպես կրթական և մշակութային բաղադրիչ:



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. վարչական շրջանում իրականացվել են բազմակողմանի մշակութային ծրագրեր:

- ✓ Ավ. Տերտերյանի անվան արվեստի դպրոց ՀՈԱԿ-ը համալրվել է նոր երաժշտական գործիքներով:
- ✓ Ավ. Տերտերյանի անվան արվեստի դպրոց հաճախում է 966 երեխա:
- ✓ «Դավթաշենի հ. 40 գրադարան» ՀՈԱԿ-ը 2017թ. համալրվել է նոր գրականությամբ:
- ✓ Ն. 40 գրադարանի ընթերցողների թիվը 1686 է:

Մշակութային միջոցառումների կազմակերպում

- ✓ Կազմակերպվել են տոն և հիշատակի օրերին նվիրված մշակութային միջոցառումներ,
- ✓ Կրթական և մշակութային բոլոր կառույցներում իրականացվել են թեմատիկ միջոցառումներ՝ նվիրված՝ Մեծ եղեռնի 102-ամյա տարելիցին,
- ✓ «Երևանյան ամառ-2017» ծրագրի շրջանակներում իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ,
- ✓ ՀՀ մարզերի և Արցախի շրջանների միջև իրականացվել են համագործակցային ծրագրեր մշակութային և կրթական ոլորտներում:



ՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. սպորտային կյանքը եղել է բավականին հագեցած և իրադարձություններով հարուստ:



- ✓ «Հանդբոլի մասնագիտացված և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ հաճախում է 150 սան:
- ✓ Դավթաշենի շախմատի դպրոց հաճախող սաների թիվը 280 է:
- ✓ Դավթաշենի բռնցքամարտի դպրոց հաճախող պատանիների թիվը 185 է:

Մարզական միջոցառումների կազմակերպում

- ✓ ՀՀ Անկախության տոնին նվիրված մարզական խաղեր,
- ✓ ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղեր,
- ✓ ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք», «Լավագույն մարզական բակ», «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» և «Տարեցների հանրապետական խաղեր» մրցույթներ,
- ✓ «Առողջ սերունդ` պաշտպանված հայրենիք» բակային փառատոն
- ✓ Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների հանրապետական ռազմա-մարզական խաղեր,
- ✓ ՀՀ հանրակրթական դպրոցների սովորողների հանրապետական երկրորդ ուսումնամարզական խաղեր,
- ✓ Հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառում,
- ✓ Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի աշխատակիցների միջև ֆուտբոլի մրցաշար:

Կազմակերպվել են.

- ✓ ՀՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Սամվել Գևորգյանի 67-ամյակին նվիրված հուշամրցաշար բռնցքամարտ մարզաձևից,
- ✓ Մարզահամերգային տոնահանդես՝ մանկապարտեզների սաների մասնակցությամբ,
- ✓ Նարդու, շախմատի և շաշկու առաջնություններ,
- ✓ ՀՀ Անկախության տոնին նվիրված բռնցքամարտի, կարատեի և շախմատի ցուցադրական ելույթներ,
- ✓ «Պարաօլիմպիկ խաղեր», «Դու կարող ես» խորագրով սպորտային միջոցառումներ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ

2017 թ. քաղաքային կանաչապատման ուղղությամբ կատարվել է զգալի աշխատանք:



Ոռոգման նոր ցանցի անցկացում՝ 508 գծմ:

Տնկվել է 1650 ծառ, 50 թուփ:

Իրականացվել են 470 ծառերի խնամքի և պահպանման աշխատանքներ:

Ծաղկային մակերեսը կազմել է 1800 քմ:

Տնկվել է 116946 ծաղիկ:



ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ՎԵՈԼԻԱ ԶՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-Ի ՀԵՏ

2017 թ. ծավալուն աշխատանքներ են իրականացվել կոյուղագծերի անցկացման, դիտահորերի վերանորոգման, մալուխների կարգաբերման ուղղությամբ:


«Վեոլիա Զուր» ՓԲԸ. Բազմաբնակարան շենքերի հարակից տարածքում իրականացվել են 15 դիտահորի վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ:

Կոյուղագծի անցկացում.

- ✔ Դավթաշեն 1-ին փողոց 1-ին նրբանցքում և Դավթաշեն 1-ին թաղամաս, 24 շենքում՝ նոր կոյուղագծի անցկացում և հնի փոխարինում:

«ԱրմենՏել» ՓԲԸ. Իրականացվել են 10 դիտահորի վերանորոգման աշխատանքներ:

«ՀԷՑ» ՓԲԸ. Իրականացվել են բազմաբնակարան շենքերի մալուխների կարգաբերման աշխատանքներ:



ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

2017թ. վարչական շրջանում կատարվել են արտաքին ցանցի արդիականացման և ընդլայնման աշխատանքներ:

- ✔ Անցկացվել է **4300** գծմ լուսավորության նոր ցանց՝ **111** լուսակետով:

Դավթաշեն համայնքում 2017 թ. ծավալուն աշխատանքներ են իրականացվել արտաքին կապերը զարգացնելու և ամրապնդելու ուղղությամբ:



Երևանի Դավթաշեն վարչական շրջանի և Իտալիայի Պեզարո քաղաքի միջև համագործակցության շրջանակում «Էրեբունի-Երևան 2799» տոնակատարություններին մասնակցելու համար Երևան էր այցելել Իտալիայի Պեզարո քաղաքի պատվիրակությունը: «Էրեբունի-Երևան 2799» տոնակատարության շրջանակում իրականացված միջոցառումներին մասնակցել է նաև Խորվաթիայի Սպլիտ քաղաքի քաղաքապետի գլխավորած պատվիրակությունը: Վարչական շրջանի «Արմեններ» պարային համույթի 30 սան մասնակցել է «Արտեկ» միջազգային մանկական կենտրոնում կազմակերպված միջազգային մրցույթ-փառատոնին:



ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

Այս տարի նույնպես Դավթաշեն վարչական շրջանը պարբերաբար սոցիալական աջակցություն է տրամադրել Ստեփանակերտ և Մարտակերտ քաղաքներին: Մարտակերտին է տրամադրվել սանմաքրման մեքենա, շինանյութ:

Դավթաշեն վարչական շրջանը, ավանդույթի համաձայն, հունիսի 1-ին հյուրընկալել է արցախցի 30 երեխաների:





**Մենք
հաշվետու ենք**
մեր համաքաղաքացիներին

ԹԵՃ ԳԻԾ՝
+(374 11) 518-288
davtashen@yerevan.am

